

«ՄԻԱՍԻՆ ԸՆԴԴԵՄ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ»

ԾՐԱԳԻՐ

Արարատ քաղաքի և հարակից համայնքների հանրակրթական դպրոցների հիմնախնդիրներ

ԶԵԿՈՒՅՑ ՈՐԱԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՐԱՐԱՏ 2015թ.

ԵԱՀԿ
Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության Երևանյան գրասենյակ



ԻՆՖՈՐՄԱՏԻԱԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ԵԱՀԿ
Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության Երևանյան գրասենյակ



ԻՆՖՈՐՄԱՏԻԱԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ



Ծրագիրը համաֆինանսավորվել է Եվրոպական միության կողմից

Ծրագիրը համաֆինանսավորվել է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից

Իրականացնող՝ Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա

Գործընկեր՝ Բնֆորմացիայի ազատության կենտրոն

Իրականացնող՝ «ՄԻԱՍԻՆ» հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանության» ՀԿ

Իրականացնող՝ «Հրեշտակ» մանկապատան եկան ՀԿ

«ՄԻԱՍԻՆ ընդդեմ կոռուպցիայի»

ծրագիր

Արարատի մարզի Արարատ քաղաքի և հարակից համայնքների հանրակրթական դպրոցների հիմնախնդիրներ

ԶԵԿՈՒՅՑ ՈՐԱԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՐԱՐԱՏ 2015թ.

«Միասին ընդդեմ կոռուպցիայի» ծրագիրը իրականացրել է «ՄԻԱՄԻՆ» հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանության» հասարակական կազմակերպությունը՝ գործընկեր՝ «Հրեշտակ» մանկապատանեկան հասարակական կազմակերպության հետ համատեղ՝ «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության համագործակցությամբ գործարկվող «Կոռուպցիայի դեմ

պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրով տրամադրված փոքր ենթադրամաշնորհների շրջանակներում: Ծրագրի բյուջեն կազմել է 2,129,900 ՀՀ դրամ, որից 1,449,900 ՀՀ դրամը տրամադրվել է «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից: Ծրագրի տևողությունն է՝ 2015թ. հուլիսի 1-ից մինչև 2015թ. հոկտեմբերի 31-ը:

«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական միության և ԵԱՀԿ-ի կողմից:

ՆԱԽԱԲԱՆ

«ՄԻԱՍԻՆ» հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանության» հասարակական կազմակերպությունը՝ գործընկեր՝ «Հրեշտակ» մանկապատանեկան հասարակական կազմակերպության հետ համատեղ 2015թ. հուլիսի 1-ից հոկտեմբերի 31-ը իրականացրել է «Միասին ընդդեմ կոռուպցիայի» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր): Ծրագիրն իրականացվել է «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության համագործակցությամբ գործարկվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրով տրամադրված փոքր ենթադրամաշնորհների շրջանակներում: «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական միության և ԵԱՀԿ-ի կողմից:

«Միասին ընդդեմ կոռուպցիայի» ծրագրի շրջանակներում իրականացված հետազոտության նպատակն է վերհանել Արարատ քաղաքի և հարակից համայնքների ուսումնական հաստատությունների հիմնախնդիրները, հասկանալ կոռուպցիայի դրսևորումները, առավել տարածված եղանակները և մարդկանց վերաբերմունքն այդ երևույթի նկատմամբ: Լրացուցիչ նպատակն է առաջարկել կրթության ոլորտում հակակոռուպցիոն պայքարի որոշակի եղանակ(ներ):

Հետազոտության նպատակից և խնդիրներից ելնելով, ինչպես նաև ուսումնասիրվող հիմնախնդրի վերաբերյալ առավել ամբողջական տեղեկատվություն ստանալու համար նպատակահարմար է անցկացնել խորին հարցազրույց ուսումնական հաստատության տնօրենի, մանկավարժների, ծնողների, աշակերտների, ինչպես նաև, դպրոցում առավելագույնը 2 տարի առաջ ուսանած անձանց և Արարատի մարզի կրթության բաժնի ներկայացուցչի հետ: Այս մեթոդը թույլ է տալիս անմիջապես հիմնախնդրի հետ առնչվողներից կամ պոտենցիալ առնչվողներից ստանալ խորքային և լայն տեղեկատվություն ուսումնասիրվող հիմնախնդրի վերաբերյալ:

Կոռուպցիան լատիներեն corruption բառից է ծագում, ինչը նշանակում է փչացում, քայքայում, այլասերում: Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի

հետազոտություններից մեկում ներկայացված է կոռուպցիայի պարզ սահմանումներից մեկը՝ «պաշտոնի չարաշահում անձնական օգուտ ստանալու նպատակով»:¹

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության մեջ կոռուպցիան սահմանվում է, որպես անձնական կամ այլ շահադիտական նպատակով, տարբեր ձևերով արտահայտված (գործողությամբ կամ անգործությամբ) ի պաշտոնե տրված իշխանական լիազորությունների չարաշահում: Կոռուպցիան ունի մի շարք դրսևորումներ և բազում «նրբերանգներ», որոնցից են կաշառակերությունը՝ կաշառք ստանալը, տալը, կաշառքի միջնորդությունը, կաշառքի շորթումը, հովանավորչությունը, պաշտոնական դիրքի կամ կապերի չարաշահումը, պաշտոնական լիազորությունները չարաշահելը կամ անցնելը, պաշտոնական կեղծիքը, պաշտոնական դիրքի օգտագործմամբ պետական սեփականության յուրացումն ու վատնումը, ինչպես նաև պաշտոնեական այլ չարաշահումները:²

Հարցումն իրականացվել է 152 անձանց շրջանում, որոնց գերակշռող մեծամասնության կարծիքով (143 հարցվող) դպրոցներում աշխատողների քանակն օպտիմալ է, ընդ որում Արարատի մարզի կրթության բաժնի պետի հավաստմամբ նույնիսկ ուսուցիչների կրճատման կարիք կա և ապագայում այդ խնդրին իրենք անպայմանորեն կանդրադառնան: Դասագրքերի հետ կապված խնդիրների առկայության մասին նշել են միայն 28 հարցվող, 103-ի կարծիքով դասագրքերի հետ կապված խնդիրներ չկան, իսկ 17-ի կարծիքով բավարար են կրթության արդյունավետ կազմակերպման համար: Ինչ վերաբերում է հիգիենայի հետ կապված հարցերին, ապա այստեղ պատկերը փոքր ինչ այլ է, հարցվողներից 82-ի կարծիքով հիգիենայի մակարդակը բարձր է դպրոցում, 50-ի կարծիքով հիգիենայի պայմանները ցածր են, իսկ 16-ի կարծիքով բավարար են: Հարցվողների մեծամասնության կարծիքով (131 հարցվող) դպրոցներում որակյալ մասնագետներ են դասավանդում, 16-ի կարծիքով մասնագետները որակյալ չեն, իսկ կրթության բաժնի պետի կարծիքով մասնագետների որակյալ լինելը կարելի է գնահատել բավարար:

¹ <http://www.osf.am/wp-content/uploads/2015/03/Anti-corruption-policy-in-the-Education-sector-of-RA-Avetik-Mejlumyan.pdf>

² <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=11547>

Ուսուցիչների կողմից նյութի տրամադրման մատչելիության վերաբերյալ 58 հարցվող նշել է, որ մատչելի են տրամադրում նյութը, 39-ը նշել են, որ ավելի շատ մատչելի է, քան մատչելի չէ, 18-ի համաձայն ավելի շատ մատչելի չէ, քան մատչելի է, իսկ 2-ի կարծիքով մատչելի չէ:

Հարցվողների մեծամասնության կարծիքով (47) միայն դպրոցի տրամադրած գիտելիքներով հնարավոր չէ ընդունվել բարձրագույն ուսումնական հաստատություն, 41-ի կարծիքով ավելի շուտ հնարավոր է, քան հնարավոր չէ, 39-ի կարծիքով ավելի շուտ հնարավոր չէ, քան հնարավոր է, իսկ 21-ի կարծիքով լիովին հնարավոր է, եթե, իհարկե, աշակերտը սովորի: Պատճառների շարքում, թե ինչու հնարավոր չէ միայն դպրոցի տրամադրած գիտելիքներով ընդունվել բարձրագույն ուսումնական հաստատություն հարցվողները տվել են ամենատարբեր պատասխանները, որոնց շարքում են հետևյալները.

(ըստ առավելագույն ծայների)

- *Դպրոցական կուրսն անհրաժեշտ չափով խորացված չէ, իսկ համալսարանը դիմորդից ավելի շատ գիտելիք է պահանջում, քան այն տալիս է դպրոցը: Այսինքն դպրոցական ծրագիրը չի համապատասխանում ընդունելության քննություններին,*

- *Որովհետև ժամանակը շատ քիչ է,*

- *Դպրոցը առավելագույն գիտելիքներ չի տալիս, և բացի այդ, որ չես վճարում պարտավորված չես զգում քեզ: Վճարելը պարտավորեցնում է, որ սովորես,*

- *Դա կախված է և ուսուցչից, և աշակերտից,*

- *Ուսուցչի կողմից նյութը մատուցելու ձևն արդյունավետ չէ,*

- *Պետք է մոտիվացնել աշակերտին, որ սովորի: Մոտիվացիայի պակաս կա,*

- *Որովհետև դպրոցում մատերի արանքով են նայում ամեն ինչին,*

- *Քանի որ ոչ բոլոր ուսուցիչներն են մարչելի և որակյալ մատուցում նյութը, և բացի այդ ստացված գիտելիքները ստուգելու և ամրապնդելու համար չկան համապատասխան ընթացակարգեր,*

- *Որովհետև դասարանում կան տարբեր գիտելիքի մակարդակ ունեցող երեխաներ:*

Հնարավոր չէ աշխատել միայն լավ սովորողի հետ,

- *Անտարբերություն կա դպրոցի նկատմամբ և ծնողները հպարտանում են, որ իրենց երեխան պարապում է:*

Հարցմանը մասնակից երեխաներից 119-ը նշեցին, որ չեն վճարում անդամավճար, իսկ 16-ը նշեցին, որ վճարում են, ընդ որում հարկ է նշել, որ ներկա պահին ուսանող հանդիսացող հարցման մասնակիցներն էին հիմնականում նշում, որ վճարել են անդամավճար: Այսինքն, այս առումով որոշակի առաջընթաց է նկատվում վերջին տարիներին: Հարցվողների կողմից նշված հավաքվող գումարի չափը տատանվում է 100-2000 դրամի սահմաններում (2000 դրամ մեկ տարվա համար):

Հարցվողներից 85-ը նշեցին, որ տարվա ընթացքում տոների ժամանակ հավաքում են որոշակի գումար, որը տատանվում է 500-ից 2500-ի սահմաններում, առավելագույնը նշվել են համապատասխանաբար 500-ից 1000 դրամ, այնուհետև մինչև 100-ից 500 դրամ և 1000-ից 1500 դրամ տարբերակները:

Ընդհանուր առմամբ ուսուցիչների մեծամասնությունը նշել է, որ դրական է վերաբերվում աշակերտների կողմից տրվող նվերներին, եթե թանկարժեք չեն, իսկ մի փոքր մասն էլ նշել են, որ բացասական են վերաբերվում այդ երևույթին:

Ընդ որում տնօրեններից ոմանք նշեցին, որ խիստ բացասական են վերաբերվում տոների ժամանակ տրվող նվերներին, ոմանք նշեցին, որ արգելվում է նվերներ տալը, որ այդպես ուսուցչի անունն է ընկնում, ինչպես նաև նշվեց հետևյալ պատասխանը. «նայած ինչի համար և ինչ նվեր» է տրվում: Այսինքն իրավիճակից, դրա առանձնահատկություններից և նվերը տալու մոտիվացիայից է կախված դրա մեկնաբանումը:

Այն հարցին, թե արդյոք դասընկերների շարքում եղել են այնպիսի աշակերտներ, որոնք դժվարություններ են ունեցել այդ գումարը վճարելու հետ կապված, հարցվողներից 47-ը նշել են, որ այո, եղել են նման աշակերտներ, իսկ 38-ը նշել են, որ ոչ, նման աշակերտներ դասարանում չկան (չեն եղել):

Ինչ վերաբերում է վերոնշյալ խնդրի լուծմանը, ապա պատասխանների շարքում նշվեցին հետևյալ տարբերակները. (ըստ առավելագույն ծայրերի)

- *«Դասարանն է վճարում նրանց փոխարեն», «ուղղակի մի փոքր ավել ենք հավաքում»,*
- *«Նրանք չեն վճարում», «գումարայինին չեն մասնակցում»,*
- *«Ծնողը մի կերպ հայթայթում է գումարը, որ այսպես ասած, երեխան և ինքը վարչզգան մյուս ծնողների և երեխաների մոտ»,*

- «Կրճապում ենք գումարը, որ կարողանան վճարել»,
- «Տնօրենն է դնում նրանց փոխարեն»,
- «Ուրիշից օգնություն խնդրելով»:

Հարցվողներից 33-ը նշեցին, որ դա չի անդրադառնում համադասարանցիների հետ ունեցած հարաբերությունների վրա, իսկ 14-ի համաձայն դա միանշանակորեն ազդում է և չի կարող չազդել համադասարանցիների միջև հարաբերությունների վրա: Ինչպես նշեցին մի շարք հարցվողներ. «Շփումը վճարունակ երեխաների և անապահով երեխաների միջև սահմանափակվում է, նրանք իրենց կաշկանդված են զգում»:

Այն հարցին, թե արդյոք նկատվում է խտրական վերաբերմունք այս/այն աշակերտի նկատմամբ, 107 հարցվող տվեց բացասական, իսկ 40-ի կողմից տրվեց դրական պատասխան, իսկ պատճառների շարքում նշվեցին հետևյալները. ծնողի հեղինակությունը, աշակերտի առողջական վիճակը, ծանոթ, բարեկամ, ուսուցչի երեխա լինելու հանգամանքը, անհատականությունը, սոցիալական դիրքը, գիտելիքի մակարդակը, քանի որ չտվորողի վրա չեն ցանկանում ժամանակ վատնել, հիմնականում աշակերտի սեռը, քանի որ տղաների նկատմամբ է խտրականությունը դրսևորվում հիմնականում, ինչպես նաև ազգային փոքրամասնության ներկայացուցիչ լինելը, օրինակ՝ եզդի:

Այն հարցին, թե արդյոք նկատվում են դպրոցում հետևյալ երևույթները՝ ձեռք բարձրացնել, վիրավորել, սպառնալ - դրական պատասխան հնչեցրեցին հետևյալ քանակով հարցվողները.

- ձեռք բարձրացնել – 19,
- վիրավորել – 45,
- սպառնալ – 12:

Ընդ որում հատկանշական է, որ հաճախ նշվում էր «մեզ մոտ ոչ, բայց ուրիշների մոտ այո» պատասխանը: Սպառնալը հիմնականում կապված էր գնահատականի հետ, իսկ վիրավորելը եղան նաև այնպիսի հարցվողներ, որ որակեցին պարզապես, որպես «ուղղակի նկատողություն»: Ընդ որում մեկ ծնողի կողմից նշվեց, որ «առանց դրանց չի կարող լինել»:

Այն հարցին, թե արդար են գնահատում ուսուցիչներն աշակերտներին, հարցվողներից 73-ը տվեց «այո», 27-ը՝ «ոչ» պատասխան, իսկ 4-ն էլ նշեցին, որ «նայած ուսուցիչ»: Ընդ

որում դրական պատասխան հնչեցրած հարցվողներից շատերի կողմից հնչում էին այնպիսի արտահայտություններ, ինչպես օրինակ. «ընդառաջում են միշտ մեզ», «արդեն գիտեն ով ինչ գիտի և դնում են»:

«Ոչ» պատասխան տված հարցվողները պատճառների շարքում առանձնացնում էին հետևյալները.

- *Ուսուցիչները խտրականություն են դնում հաշվի առնելով այն հանգամանքը, թե ում երեխան է (ծանոթ, բարեկամ, ուսուցիչ),*
- *Հաճախ ուղղակի դնում են,*
- *«սիմպադիայով» են նշանակում,*
- *Գնահատում են ելնելով երեխայի սոցիալական ապահովվածության աստիճանից («Հարուստի երեխային բարձր են գնահատում»):*

Հետաքրքրական է, որ հարցվողների կեսը (37 հարցվող աշակերտներ և ուսանողներ) տեղյակ չէին աշակերտական խորհրդի ձևավորման կարգից, իսկ մյուս կեսը տեղյակ էր և ինչպես նշում էին, ունեցել էին իրենց մասնակցությունը դրանում, իսկ քոլեջում սովորողներից 8-ը տեղյակ չէին ուսանողական խորհրդի կազմումից, իսկ 4-ը տեղյակ էին և մասնակցել էին:

Ինչպես նաև ձայները հավասար քանակով բաշխվեցին ծնողների պարագայում: Ծնողների կեսը (15 ծնող) տեղյակ չէր ծնողական խորհրդի կազմման կարգի մասին և չէր մասնակցել, իսկ մյուս 15-ը տեղյակ էին և ունեցել էին իրենց մասնակցությունը:

Հարցվողների շրջանում զգալի մեծամասնությունը տեղյակ չէր, թե արդյոք տվյալ հաստատության տնօրենն ունի կուսակցական պատկանելիություն, թե ոչ: 24 հարցվող հստակ գիտեր, որ ունի, իսկ 4 հարցվող նշեցին ոչ պատասխանը, ընդ որում, որ այս բոլոր դեպքերում տնօրենն ունեցել է կուսակցական պատկանելիություն:

Հարցվողներից 14-ը նշեցին, որ չեն եղել դեպքեր, որ ստիպողաբար մասնակցեն կուսակցության կողմից կազմակերպված ինչ-որ միջոցառումների, 7-ը նշեցին, որ այո, եղել են նման դեպքեր /քարոզարշավներ/, իսկ 3-ն էլ նշեցին, որ մասնակցությունը եղել է միայն ցանկությամբ:

ՈՒՍՈՒՑԻՉ-ԱՇԱԿԵՐՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսուցիչ – աշակերտ հարաբերությունների, դրանցում փոփոխություններ կատարելու հետ կապված նշվել են հետևյալ պատասխանները. ավելի ընկերական հարաբերություններ պետք է լինեն, աշակերտներին պետք է խիստ պատիժների ենթարկել, հիմա անմիջական և ազատ են, բայց այդպես չպետք է լինի, ոչ մի բան չէի փոխի, ուսուցիչն աշակերտի կողմից ընդունված չէ, խիստ պաշտոնական պետք է լինեն հարաբերությունները և այլն:

Ուսուցիչների գնահատմամբ կան որոշակի տարբերություններ ավագ դասարանում սովորող աշակերտների և լրացուցիչ պարապմունքների հաճախող երեխաների հաճախումներում: Ավելի հաճախ բացակայում են կրկնուսույցի մոտ պարապող աշակերտները: Իսկ բացակայությունների հետ կապված հարցերը լուծելու ամենատարածված եղանակը զգուշացումներ անելն է և փոխզիջումների գնալը:

	Քուլեջ/ԲՈՒՀ	Դպրոց	Հավասար
Որտե՞ղ է ավելի օպտիմալ աշխատողների քանակը:	20	7	19
Անհրաժեշտ դասագրքերի հասանելիությունը որտե՞ղ է ավելի բարձր:	10	26	10
Որտե՞ղ են հիգիենայի պայմաններն ավելի բարձր մակարդակի վրա:	31	6	9
Որտե՞ղ են մասնագետներն ավելի որակյալ:	25	8	13
Աշակերտ-ուսուցի՞չ, թե՞ ուսանող-դասախոս հարաբերություններն են ավելի հարմարավետ:	17	21	8
Որտե՞ղ է կոռուպցիայի մակարդակն ավելի բարձր:	33	9	4

Մանկավարժների մի մասը նշեց, որ իրենց համար կազմակերպվող վերապատրաստումներում կփոխեին այն, որ ավելի նպատակային և հագեցված լինեին, վերապատրաստման թեմաները, լինեին միայն առարկայական, վերապատրաստումն իրականացնելը իրենցից գիտելիքներով ավելի հարուստ մասնագետ և այլն: Հատկանշական է, որ եթե առաջին տեղը ձայների առավելագույն քանակով «ոչինչ չէի

փոխի» տարբերակն էր, ապա երկրորդ տեղում նշվում էր, որ դրանց ընթացքում ոչ մի նոր բան չի ասվում, պարզապես նույն բանը տարբեր ձևերով են ասում:

Նշվեց, որ գործընկերների հետ հիմնականում ծագող դժվարությունները կապված են լինում գնահատականների, մանկավարժական դիրքորոշումների, մոտեցումների, դասի վարման ձևի հետ և այլն, ինչպես նաև եղան մասնակիցներ, ովքեր հրաժարվեցին պատասխանել: Ստացված տեղեկատվության համաձայն դժվարությունները լուծվում են փոխզիջման, փոխըմբռնման և փորձի փոխանակման միջոցով:

Ընդ որում հարցման մասնակիցների մեծամասնությունը թեստավորմամբ ուսուցչին աշխատանքի ընդունելն արդյունավետ չի համարել, և հիմնական խոչընդոտը, որ նշվում էր նրանց կողմից այն է, որ թեստերը մասնագիտական չեն, և բացի այդ աշխատանքի ընդունվելու համար առնվազն մեկ տարվա փորձաշրջան է հարկավոր: Ինչպես նշեց մասնակիցներից մեկը. «...թեստերով աշխատանքի ընդունելու դեպքում ավելի հեշտ է քողարկել թեկնածուի մասնագիտական պատրաստվածությունը, քան, օրինակ, կենդանի դաս վարելու հիման վրա: Ուսուցչի ընդունման ներկա համակարգը ստուգում է միայն թեկնածուի տեսական գիտելիքները և որևէ կերպ չի անդրադառնում երեխաների հետ հարաբերություններ կառուցելու կարողությանը»:

Հարկ է նշել, որ հարցմանը մասնակից ծնողների շրջանում գրեթե բոլորը տեղյակ չէին, թե ինչպես է ուսուցիչն ընդունվում աշխատանքի, իսկ թեստավորմամբ աշխատանքի ընդունելը մեծ մասը համարում էր արդյունավետ: Նրանք, ովքեր չէին համարում արդյունավետ պատճառների շարքում նշում էին այն, որ «բախտի բան է», իմիջայլոց նշում են, որ դա հնարավորություն չի տալիս ստուգել գիտելիքներն ամբողջությամբ:

Դպրոցն ավարտած մասնակիցների կարծիքով դպրոցում ավելի ջերմ էին հարաբերությունները, իսկ համալսարանում ավելի խիստ են, և մասնագիտության շրջանակներում ընդհանուր հետաքրքրություններ են առաջ գալիս, որը շփումն ավելի բովանդակալից ու հետաքրքիր է դարձնում:

Ընդ որում ուսանողների գերիշխող մեծամասնությունը լրացուցիչ պարապել է նոր ընդունվել, իսկ մյուսները պարզապես քոլեջից են ընդունվել, և 34 հարցված ուսանողից միայն 2 հոգին է, որ ընդունվել է բուհ առանց լրացուցիչ պարապմունքների:

Հարկ է նշել, որ դպրոցականների գերակշիռ մասը պատրաստվում է ուսումը շարունակել բարձրագույն ուսումնական հաստատությունում, իսկ փոքր մասը, որը չի

պատրաստվում շարունակել նշեց, որ պատճառը ֆինանսական խնդիրներն են: Ընդ որում, նրանք, ովքեր պատրաստվում են շարունակել ուսումը պարապում են լրացուցիչ կամ պատրաստվում են պարապել, և միայն 3-ն էին, որ նշեցին, որ չեն պարապելու:

ԿՈՌՈՒՊՑԻԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Հարցման մասնակիցների ճնշող մեծամասնությունը 86-ը կոռուպցիան կապում էր կաշառքի հետ, 15-ը թալանի, դրամաշորթության, 9-ը դիրքի չարաշահման, մյուս 9-ը անօրինական գործողությունները օրինական դարձնելու հետ, այլ պատասխանների շարքում կոռուպցիան կապվել է հետևյալ տարբերակների հետ. խաբեության հետ, անիմաստ դրամահավաքների, ազնվության բացակայության, կեղծիքի հետ, խնդիրներն արագ և հեշտ կարգավորելու, փողի, «նախապես շնորհակալության» հետ և այլն: Ընդ որում առանձացվում էր այսպես կոչված «դրական» և «բացասական» կոռուպցիա: Այսինքն, այն ժամանակ, երբ անձը չգիտի իր իրավունքները և հարցը լուծելու համար կաշառք է տալիս դա համարում էին «դրական», իսկ այն դեպքում, երբ գիտի իր իրավունքների մասին, բայց տալիս է՝ «բացասական»:

Հարցման մասնակիցները կոռուպցիայի ընդհանուր պատճառների շարքում նշում են հետևյալները.

- *Գործերն ավելի հեշտացնելու և խնդիրների լուծումն ավելի արագացնելու համար,*
- *Գնահատական ստանալու համար,*
- *Բարձր / լավ նահատական ստանալու համար,*
- *Ցանկալի / լավ վերաբերմունքի արժանանալու համար,*
- *Գիտելիքի անբավարարության պատճառով, իրավունքների անտեղյակությունից,*
- *Իրենց նպատակին / ուզածին հասնելու համար,*
- *Աշխատանքի ընդունվելու համար,*
- *«Առաջ գնալու» համար,*
- *Անձնական շահերն իրացնելու համար,*
- *Քանի որ առանց դրա շարժարկը կարող են չլուծվել,*
- *Արեստարի / դիպլոմի համար,*
- *«Աչքին բարձրանալու» / «աչք մտնելու» համար,*

- *Ոչ օրինական նպատակներին հասնելու համար,*
- *Անկարողության պատճառով,*
- *Տվյալ միջավայրում «հատուկ» կարգավիճակ ձեռք բերելու, փարբերվելու համար,*
- *Իրենց ուժերի վրա վստահ չլինելու պատճառով,*
- *Համապատասխան որակավորում ստանալու համար:*

Մյուս պատասխանների շարքում նշվեցին այնպիսիք, ինչպիսիք են օրինակ. ինչ-որ արդյունքի հասնելու համար, ինքնահաստատվելու համար, խնդրի օրինական լուծման վրա կասկածելու պատճառով, որովհետև կաշառք վերցնող կա, որ իրենց թերի կատարված աշխատանքը լիարժեք դառնա, առանց դրա արհամարված կլինեն, անինքնասեր լինելու պատճառով, վարձահատույց լինելու համար, բացակաները անտեսելու համար, իրենց անհրաժեշտ տեղեկատվությունը ստանալու համար, դիմացինի հանդեպ վախ ունենալու պատճառով, իրենց հիվանդին «լավ նայելու» համար, որ անհնարինը դառնա հնարավոր, իրենց սկսած գործն ավարտին հասցնելու համար, քանի որ չեն գիտակցում իրենց լավը, «ուղեղ չունենալու» պատճառով, քանի որ ինչպես ասում էր մի դպրոցական *«առանց գումարի և ծանոթի հիմա առաջ չես գնա»* և այլն:

Այն հարցին, թե ի՞նչ են կարծում, ինչու են կաշառք վերցնում, մասնակիցները հնչեցրեցին նմանատիպ պատասխաններ.

• Ցածր աշխատավարձի, ֆինանսական վիճակի պատճառով, ցանկանում են շարացնել ունեցածը, որ ավելի բարեկեցիկ ապրեն,

- *Մարդու բնույթից է,*
- *Ազահության պատճառով,*
- *Քանի որ տալիս են,*
- *Սովորում է անընդհատ վերցնելուն,*
- *Թույլ կամքի, սկզբունքների բացակայության պատճառով,*
- *Լրացուցիչ գումարը հաճելի է / «ավել գումարը ոչ մեկի աչքը չի հանի»,*
- *Գիտակից չլինելու պատճառով,*
- *Անձնական շահերը բավարարելու համար,*
- *Որ տվողի ցանկությունը բավարարեն / «որ քեզ առաջ տանեն»:*

Նաև հնչեցվեցին այնպիսի պատասխաններ, ինչպիսիք են. *«քանի որ այսօր բոլորին էլ գումար է հարկավոր», «որ կողքից գումար աշխատեն», «հարստանալու միտումով»,*

«մասնագիտական էթիկայի կանոններին չհետևելու արդյունքում», «մատուցած ծառայությունների համար, որպես փոխհատուցում», «անձնական ինքնակրթման ցածր մակարդակի պատճառով», «գայթակղությունից ելնելով», «հովանավորչություն անելու համար», «վատ մարդ լինելու պատճառով», «իր աշխատանքը չսիրելու», «որևէ բան անվճար չանելու համար», «որովհետև այնքան դաստիարակություն և մակարդակ չունեն հասկանալու համար, որ իրենց պատիվն են գցում» և այլն:

Հարցվողների կարծիքով կոռուպցիայի դեմ պետք է պայքարել հետևյալ միջոցներով.

- Համախմբվելով և յուրաքանչյուրս մեզանից սկսելով,
- Մշտական, ուժեղացված հսկողության միջոցով,
- Պարզապես չտալով,
- Օրենքները խստացնելով (պաշտոնից ազատում, իրավական պատասխանատվության ենթարկում և այլն),
- Պետք է պայքարել վերևից,
- Մեղավորներին պատժելով,
- Եկող սերունդների համար կազմակերպել սեմինարներ, գովազդային հոլովակներ, փակցնել պաստառներ, ծանոթացնել կոռուպցիայի հետևանքներին և կանխարգելել,
- Գիտակցությունը, մտածելակերպը փոփոխելով,
- Աշխատողին բարձր վարձատրելով,
- Տուգանքների միջոցով,
- Եկամտահարկը նվազեցնելով,
- Պատժել վերցնողին, եթե չվերցնի կվերանա:

Ընդ որում երկրորդ ամենաշատ նշված պատասխանը «Հնարավոր չէ, չենք կարող պայքարել դրա դեմ» պատասխանն է եղել: Այլ պատասխանների շարքում նշվեցին հետևյալները. չպետք է առաջարկել և անհրաժեշտության դեպքում պետք է բողոքել, երկիրը պետք է փոխվի, պետք է բարձրացնել անհատի ինքնարժեքը, պատժել կաշառք սովորին, մարդու իրավունքների պաշտպանությամբ, ի սկզբանե հաստատության տնօրենին / ղեկավարին ընտրելիս լինել ավելի զգոն, «միայն օրենքով, քանի որ փողոցային բազառներով կամ բարոյախրատական ճառերով հարցը չի լուծվի», «սովորեցնել աշակերտին, որ եթե դու ունես որևէ բանի իրավունք, պայքարիր մինչև վերջ՝

արդար ճանապարհով, հակառակ դեպքում միշտ կլինես կաշառք տվողի դերում և շղթան երբեք չի ավարտվի» և այլն:

Դպրոցում կոռուպցիոն երևույթների վերաբերյալ հարցին տրված պատասխանների արդյունքում ստացված պատկերը հետևյալն է.

Երևույթ	Կոռուպցիա է	Կոռուպցիա չէ	Մասամբ է կոռուպցիա
Ծաղիկ նվիրել	9	143	0
Կոնֆետներ, խմիչք նվիրել	44	102	6
Ռեստորան հրավիրել	59	90	3
Տոների ժամանկ ուսուցչին նվերներ տալ	35	114	3
Տարվա վերջում ուսուցչին նվեր տալ	39	108	5
Ուսուցչի/տնօրենի, կազմակերպչի/ ծննդյան տոնին նվեր տալ	49	98	5
Դիրքի չարաշահում	104	46	2
Պարտականությունների թերի կատարում	62	88	2

Ընդ որում հավելենք, որ պարտականությունների թերի կատարումը որոշ հարցվողների կարծիքով «պարզապես թերություն է», ծաղիկ նվիրելը եթե պարտադրված չէ այդ դեպքում կոռուպցիա չէ, ինչպես նաև տոների ժամանակ նվեր տալը կոռուպցիա համարել, թե ոչ կախված է նրանից, թե ինչ ուսուցչի ես տալիս այդ նվերը: Որոշ հարցվողների պատկերացմամբ, եթե առանձին ես նվիրում, դա է համարվում կոռուպցիա, իսկ ծննդյան տոնի կապակցությամբ նվեր տալը որոշ հարցվողներ համարում են պարզապես «աչք մտնելու ձև»:

ԽՆԴԻՐՆԵՐԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Հարցման արդյունքներով դպրոցի հիմնական խնդիրներն են.

- Շենքային պայմանները, վերանորոգման խնդիրը,

• Համապատասխան նյութատեխնիկական բազայով ապահովման խնդիրը, մարզադահլիճների, լաբորատորիաների տեխնիկական հնարավորությունների պակասը,

• Խիստ վերահսկողության բացակայությունը / անկարգապահության խնդիրը («պեպք է խիստ վերահսկողություն լինի աշակերտների, ինչու չէ նաև ուսուցչուհիների նկատմամբ»),

• Զեռուցման խնդիրը,

• Հիգիենայի խնդիրը,

• Մասնագետների վերապատրաստման, նրանց հմտությունների զարգացման խնդիրը,

• Ուսման որակի բարձրացման ղնդիրը («...որ առանց լրացուցիչ պարապելու հնարավոր լինի ընդունվել բուհ»),

• Գրքերի խնդիրը,

• Դպրոցի ֆինանսավորման խնդիրը («...եթե ցանկանում ես դրական արդյունք ունենալ, ուրեմն պեպք է ֆինանսական ներդրումներ անես»)

• Բարձրորակ մանկավարժների պակասը,

• Հոգեբանների բացակայության խնդիրը,

• Ուսուցչին աշխատանքի ընդունելու ընթացակարգերի նկատմամբ խիստ վերահսկողության բացակայությունը,

• Դասարաններում աշակերտների թվի խնդիրը («...պեպք է կրճատել...»)

• Զրի խնդիրը,

• Ուսուցիչ – աշակերտ հարաբերությունների կարգավորման խնդիրը,

• Աշխատավարձի ցածր լինելը (հարցվողներից մեկի բնորոշմամբ «տիտանական աշխատավարձ»),

• Ճաշարանի խնդիրը,

• Դպրոցի դերի բարձրացման խնդիր:

Ինչպես նաև, նշվեցին մի շարք այլ խնդիրներ ևս, որոնց շարքում կարելի է առանձնացնել հետևյալները. աշակերտների միջև շփման մեծացման, աշակերտների պատժելիության սահմաններում պահելու, ճիշտ ղեկավարներ ընտրելու / նշանակելու, ժամանակակից տեխնոլոգիաներով դասերի անցկացման, անհրաժեշտ ժամաքանակով ապահովման, համապատասխան դասասենյակների բացակայության, ուսուցիչների մոտ

պատասխանատվության իջեցման, սանհանգույցների նորոգման, ֆիզկուլտուրայի համար անհրաժեշտ համապատասխան գույքի բացակայության, տարածքի փոքր լինելու, վիրավորական և պիտակավորող միջավայրի առկայության խնդիրները:

Ընդ որում, հարկ է ընդգծել, որ մասնակիցների կողմից նաև կարևորվեցին այնպիսի հարցերի լուծումը, որոնք կապված են հետևյալների հետ. մեկ աշակերտին տրամադրվող գումարի ավելացման անհրաժեշտությունը ավագ դպրոցում, քանի որ աշակերտներն այնտեղ քիչ են, իսկ այդ գումարը ողջ դպրոցի համար բավարար չէ, երեխաների խնամքի վերաբերյալ ստուգումների հետևողականության բարձրացումը, խտրականության բացառումը, որ բոլորին վերաբերվեն, որպես աշակերտների, այլ ոչ թե հարուստի կամ աղքատի, ինչպես նաև ուսուցիչներին ներառական կրթության բովանդակության և ներառական դպրոց հաճախող երեխաների մասին գիտելիքի տրամադրման խնդիրը և միջավայրը հատուկ կարիքներով երեխաներին հարմարեցնելու խնդիրը:

Հարկ է նշել, որ դպրոցներից ոչ բոլորում է, որ անապահով աշակերտների հստակ թիվ կա, ընդ որում այդ խմբի երեխաներից ոչ բոլորին է, որ դպրոցը կարողանում է տրամադրել որոշակի աջակցություն: Տրամադրվող հիմնական աջակցությունը լինում է գրքերի անվճար տրամադրման, ինչպես նաև գյուղապետի կողմից որոշակի աջակցության տեսքով:

Հարցման մասնակիցների մեծամասնության կարծիքով դասարանում աշակերտների օպտիմալ թվաքանակը 15-ից 20-ի շրջանակներում պետք է տատանվի, այնինչ դպրոցներում կան դասարաններ, որտեղ աշակերտների թիվը հասնում է ընդհուպ մինչև 35-ից 40:

Հարկ է ամփոփելով ընդգծել, որ հարցման ընթացքում նկատվում էին ընդհանուր առմամբ որոշակի հակասական երևույթներ, ինչպես օրինակ, նշվում էր, որ «մենք գումար չենք հավաքում, բայց միևնույն ժամանակ նշվում էր, որ կան երեխաներ, որոնք դժվարություններ են ունենում վճարելու հետ կապված», կամ «լիովին հնարավոր է միայն դպրոցի տրամադրած գիտելիքներով ընդունվել բուհ, բայց ես պարապելու եմ լրացուցիչ», ինչպես նաև, դպրոցի անձնակազմի շրջանակներում նկատվում էր ընդհանուր անհանգստության մթնոլորտ:

Ինչպես նաև համապատասխան մարմինների տրամադրած տեղեկատվության համաձայն, վերջին տարիներին ծնողների կողմից ստացվող բողոքները կրճատվել են,

դրանք հիմնականում գրանցվում են օգոստոսի վերջ, սեպտեմբերի սկիզբ ընկած ժամանակահատվածում, և վերաբերում են հիմնականում սահմանված օրենքների կարգերի պարզաբանումներին: Ինչպես նշվում է, կրճատումը պայմանավորված է նրանով, որ իրավական ակտերն ավելի հասանելի են դարձել, և դպրոցներում ամեն ինչ կատարվում է թափանցիկ կերպով:

Հարկ է նշել, որ դպրոցների մանկավարժական անձնակազմի ներկայացուցիչները և տնօրենները հստակ պատկերացում չունեն կոռուպցիայի դեմ պայքարի ծրագրերի ու մեխանիզմների մասին: Ինչպես նաև ծնողական խորհրդի ձևավորման մասին ծնողների, աշակերտական խորհրդի ձևավորման մասին աշակերտների տեղեկացվածության մակարդակն է ցածր:

Ընդ որում կարող ենք փաստել, որ դեռևս ակտուալ է սովորողների հովանավորչությունը ուսուցիչների և ուսումնական հաստատության ղեկավարության կողմից (բարեկամական կապի, ծանոթ լինելու դեպքում): Ինչպես նաև հարցմանը մասնակցած բոլոր տնօրեններն ունեին կուսակցական պատկանելիություն, ինչը որոշակի ռիսկեր է պարունակում տնօրենի պաշտոնը (թեկուզ ինքնակամ) կուսակցության խնդիրներին ծառայեցնելու առումով: Ինչպես նաև հետազոտության արդյունքում պարզվեց, որ շատերը կոռուպցիայի որոշ դրսևորումներ համարում են պարզապես «մարդկային մոտեցում, վերաբերմունք», «շնորհակալություն հայտնելու ձև»:

Ինչպես նաև ուշադրության է արժանի այն փաստը, որ լրացուցիչ պարապմունքների հաճախող, բայց դեռևս դպրոցում սովորող երեխաները նշում էին, որ հասցնում են ամեն օր հաճախել դպրոց, բայց ուսուցիչների՝ աշակերտների հաճախելիության վերաբերյալ տրված գնահատականները, որոշակի հակասություն են ցույց տալիս, քանի որ այդ գնահատականների համաձայն լրացուցիչ պարապմունքների հաճախող երեխաների գնահատականները ավելի ցածր են, քան մյուս աշակերտներինը: Իսկ արդեն ուսանող հանդիսացող մասնակիցները, հիմնականում նշում էին, որ չեն հասցրել հաճախել դպրոց ինչպես կարգն է պահանջում, և որոշների հավաստմամբ դա առաջ է բերել որոշակի կոնֆլիկտներ ուսուցչական անձնակազմի հետ, իսկ որոշների հավաստմամբ էլ հարցը լուծվել է ուսուցիչների ներողամտության, ընդառաջման միջոցով:

ԵՐՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հարկ է ընդգծել, որ կոռուպցիան առհասարակ դժվար է չափել, և չափումները հիմնականում հենվում են տվյալ միջավայրում կամ հասարակությունում կոռուպցիայի մասին մարդկանց ընկալումների վրա:³

Այս խնդրի տարածվածությունը վկայում է, որ այն ոչ միայն անհատական, այլև՝ սոցիալական երևույթ է: Կրթության արժեզրկվածությունն ու մարդկային կապիտալի ցածր արժեքը (համեմատած սոցիալական կապիտալի հետ) նպաստում է կոռուպցիոն վարքի տարածմանը: Գործողության կոռուպցիոն բնույթը բացահայտելու համար հարկավոր է հասկանալ այն կատարող անձի մոտիվացիան, նրա միջավայրային այլ առանձնահատկությունները և այլն:⁴

Շեռագոստության արդյունքներից կարող ենք եզրակացնել, որ ճնշող մեծամասնությունը բացասական է գնահատում կոռուպցիան, բայց պետք է նկատել, որ քչերն են պատկերացնում այն երևույթների ամբողջությունը, որոնք վերաբերում են կոռուպցիային և հիմնականում կապում են այն կաշառքի տրամադրման հետ:

Կոռուպցիան լրջագույն հանցագործություն է, որը վերաբերում է ոչ միայն կաշառակերությանը, այլև հովանավորչությանը, պաշտոնական դիրքի չարաշահմանը, փողերի լվացմանը, իշխանազանցությանը, յուրացմանը և հափշտակմանը, ապօրինի իրավական գործողություններին (անարդար դատավճիռ, ապացույցներ կեղծել և այլն), հարկերը վճարելուց խուսափելուն, նեպոտիզմին և այլ նմանատիպ երևույթների:⁵

Շեռագոստության արդյունքներից ելնելով կարող ենք փաստել, որ անհրաժեշտ է բարձրացնել բնակչության իրազեկվածության մակարդակը, այս երևույթի բացասական հետևանքների, դրա դեմ պայքարելու ձևերի վերաբերյալ, ինչպես նաև պետք է բարձրացնել հանրային անհանդուրժողականության մակարդակը այս երույթի նկատմամբ, քանի որ կոռուպցիան տեսնելու, ճանաչելու, այն որպես այդպիսին, որպես սոցիալական հիմնախնդիր գնահատելու, կանխելու կամ նվազագույնի հասցնելու համար անհրաժեշտ է համապատասխան գիտելիքների առկայություն:

Քանի որ քաղաքացին կարող է չիմացության պատճառով հայտնվել կաշառակերության ծուղակում օրինակ այն դեպքում, երբ օրենքով հասանելիք

³Նազարյան Օ., «Ինչպես ապրել Հայաստանում և խուսափել կոռուպցիայից» ձեռնարկ:

⁴ <http://www.osf.am/wp-content/uploads/2015/03/Anti-corruption-policy-in-the-Education-sector-of-RA-Avetik-Mejlumyan.pdf>

⁵ Նազարյան Օ., «Ինչպես ապրել Հայաստանում և խուսափել կոռուպցիայից» ձեռնարկ:

ծառայության դիմաց նրանից պահանջում են որոշակի «մուծում», և նա վճարում է գումարը անձին՝ կարծելով, թե դա միանգամայն օրինական է: Եթե այդ վճարումն ուղղակիորեն կատարվում է ծառայությունը մատուցող պաշտոնյային, և վերջինս դրա դիմաց կտրոն չի տալիս կամ այլ կերպ ամրագրում վճարումը, պետք է կոահել, որ ամենայն հավանականությամբ գումարը գնալու է պաշտոնյայի գրպանը:

Քաղաքացուն կոռուպցիայի մեջ ներքաշելը համեմատաբար հեշտ է, երբ նրան հարկավոր է մի բան, որն իր սոցիալական կարգավիճակի համար նախատեսված չէ, և այն դեպքերում, երբ այն նախատեսված է, բայց քաղաքացին ուզում է այն արագ ստանալ: Նման իրավիճակում քաղաքացու իրավագիտակցությունը բարձրացնելու քայլերը բավարար չեն, որովհետև միշտ էլ կգտնվեն մարդիկ, ովքեր ուզում են մեծամասնության նկատմամբ արտոնյալ իրավիճակում գտնվել: Այս պարագայում արդեն, պետությունը պետք է քայլեր ձեռնարկի կոռուպցիոն ռիսկերը վերացնելու համար: Նման օրինակ է անձնագիր ստանալու կարգը. այն անվճար է որոշակի ժամկետում (15 օրացույցային օր), իսկ դրանից ավելի արագ ստանալու համար քաղաքացին պաշտոնական վճարում է կատարում պետական բյուջե (20-60 հազար դրամ՝ 5-1 օրում անձնագիր ստանալու համար):

Հասկանալի է, որ կոռուպցիան հնարավոր չէ առանց քաղաքացիների մասնակցության. կոռուպցիայի գործարքի համար պահանջվում է երկրորդ կողմ: Սա գիտակցող քաղաքացին պարզապես թույլ չի տա, որ իր օգնությամբ կոռուպցիան տարածվի և արմատավորվի իր միջավայրում, ինչի արդյունքում հետագայում նա ստիպված կլինի թանկ գին վճարել յուրաքանչյուր օրինականորեն հասանելիք օգուտ ստանալու դիմաց կամ էլ զրկվել այդ օգուտից:

Հակակոռուպցիոն մշակույթը, ինչպես մշակույթի ցանկացած դրսևորում, ձեռքբերովի նորմերի և ավանդույթների ամբողջություն է: Կոռուպցիոն մշակույթը՝ նույնպես: Դա նշանակում է, որ մենք ենք կատարում ընտրություն, թե որ նորմին ենք հետևում, և որ մշակույթին ենք նպաստում: ⁶

Այստեղից հետևություն, որ հարկ է համապատասխան միջոցառումների իրականացմամբ հասնել հասարակության մեջ երևույթի ճիշտ ընկալմանը, հակակոռուպցիոն մշակույթի արմատավորմանը, հարկ է բերել մարդկանց այն

⁶ Նազարյան Օ., «Ինչպես ապրել Հայաստանում և խուսափել կոռուպցիայից» ձեռնարկ:

գիտակցությանը, որ օրինակ ոչ պրոֆեսիոնալ մեկին կաշառքի շնորհիվ պատասխանատու պաշտոնի նշանակելը ոչ միայն զրկում է արժանի մասնագետին՝ այդ պաշտոնում իրացվելու հնարավորությունից, այլև տվյալ պաշտոնով նախատեսված գործառույթների կատարումը դարձնում է ոչ արդյունավետ, ինչից տուժում են հենց իրենք, իրենց մերձավորները և առհասարակ ողջ հասարակությունը: Հարկ է նրանց մոտ մոտիվացիա առաջ բերել, որպեսզի նրանք ցանկանան իրավիճակը փոխել դեպի լավը, և պատրաստ լինեն դրանում որոշակի ջանքեր ներդնելուն:

Փաստորեն առաջնահերթ է համարվում երևույթի մասին իրազեկվածության մակարդակի բարձրացումը: Բայց, անշուշտ անհրաժեշտ է նաև բարձրացնել իրավագիտակցությունը, որպեսզի մարդիկ ճանաչեն իրենց իրավունքները, իմանան, թե ինչպես կարող են իրացնել դրանք, ինչպես պետք է ու կարող են վերացնել դրան խոչընդոտող գործոնները և այլն, որպեսզի ձևավորվի պահանջատեր քաղաքացի, որը գիտակցում է իր շահերն ու պատրաստ է դրանց պաշտպանության ուղղությամբ իրականացնել համապատասխան քայլեր, ինչպես նաև գիտի, թե անհրաժեշտության դեպքում ում հետ, որ մարմինների հետ կարող է համագործակցել և ինչպես:

Այս ամենը կարելի է իրականացնել տարբեր եղանակներով, ինչպես օրինակ.

- *թիրախ խմբերի համար կազմակերպել թեմատիկ սեմինարներ, խմբային քննարկումներ,*

- *պատրաստել համապատասխան հոլովակներ և տարածել դրանք,*

- *տեղադրել արտաքին գովազդ,*

- *հաշվի առնելով մամուլի ազդեցության հնարավորությունը մարդկանց գիտակցության ձևավորման վրա համագործակցել նաև նրանց հետ, որ ճիշտ մշակված, հատուկ շեշտադրումներ կատարող հոդվածներ հրատարակեն,*

- *տարբեր մրցույթների կազմակերպման միջոցով խթանել դպրոցականների, ուսանողների շրջանում երևույթի ուսումնասիրությանը, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարի եղանակների վերաբերյալ առաջարկներ ներկայացնելուն,*

- *խթանել նրանց մասնակցությունը հակակոռուպցիոն գործընթացներին,*

- *ծանոթացնել նրանց կոռուպցիայի դեմ հաջող պայքար ծավալող երկրների դրական փորձին:*